

Վ. ԲԻԱՆԿԻ

# ՊՈՉԵՐԸ




891.715  
Բ-62

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀՀԿՅՑՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱ-ՊԱՍ. ԳՐԱԿԱՆ. ԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ

1940



Մի անգամ ճանձը յեկավ մարդու մոտ և ասաց.

— Դու բոլոր գաղանների տերն ես, ամեն

բան կարող ես անել: Այնպես արա, վոր յես ել պոչ ունենամ:

— Պոչն ինչիդ ե պետք, — հարցրեց մարդը:

— Գեղեցկության համար. ինչպես բոլոր գաղանների պոչն ե, — պատասխանեց ճանձը:

— Այնպիսի գաղան չկա, վորի պոչը գեղեցկության համար լինի: Խակ դու առանց պոչի ել լավ ես ապրում, — ասաց մարդը:

Ճանձը շատ բարկացավ և սկսեց մարդուն ձանձրացնել. մեկ տեսար, յեկավ նրա համեղ կերպարի վրա նստեց, մեկ ել տեսար՝ քթի վրա բարձրացավ, մեկ մի ականջի մոտ բզզաց, մեկ՝ մյուս ականջի Շատ ձանձրացրեց, ել գիմանալու բան չեր և մարդն ասաց.

— Դե լավ, այ ճանձ, թոփը անտառ, գաշտ, ամեն տեղ: Յեվ յեթե գտնես ո՞ի զաղան, թոշուն, կամ սողուն, վորի պոչը գեղեցկության համար լինի կախված, կարող ես վերցնել քեզ: Յես թույլատրում եմ:

Ճանձն ուրախացավ և պատռհանից դուրս թռավ:

Այգու միջով թռչելիս նա տեսավ, վոր տերեկի վրայով մի խխունջ ե սողում:

— Խխունջ, այ խխունջ, պոչդ տուր ինձ, —

գոչեց ճանձը: — Քո պոչը գեղեցկության համար ե:

— Ի՞նչ ես ասում: Ի՞նչ ես ասում, — պատասխանեց խխունջը: — Յեւ իսկի պոչ ել չունեմ, սա ի՞ն փորն ե: Փորս կուչ ու ծիգ եմ անում ու սողում: Յես փորտուիկ եմ:

Ճանձը տեսավ, վոր սիալվել ե. թողեց հեռացավ:

Թուավ գետի մոտ և տեսավ ձկանն ու խեցգետնին, յերկուսն ել պոչավոր:

— Զկնիկ, այ ձկնիկ, պոչդ տուր ինձ: Քո պոչը գեղեցկության համար ե, — ճայն տվեց ճանձը:


— Իսկի ել գեղեցկության համար չե, — պատասխանեց ձուկը: — Իմ պոչը զեկ ե: Յեթե հարկավոր ե դեպի աջ դառնալ, պոչս դեպի ձախ եմ ծոռւմ, իսկ յեթե պետք ե դեպի ձախ դառնալ՝ դեպի աջ եմ դարձնում: Պոչս քեզ տալ չեմ կարող:

Ճանձը դարձավ խեցգետնին.

— Խեցգետին, պոչդ տուր ինձ:

— Զեմ կարող տար, — պատասխանեց խեցգետինը: Վոտներս թույլ են ու բարակ, նրանցով թիավարել չեմ կարող: Մոկ պոչս լայն ե

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱՐԵՎԱՏՅԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ  
ԱՐԵՎԱՏՅԱՆԻ ԱՐԴՅՈՒՆ



և ուժեղ: Հենց վոր պոչս չփափացնում եմ ջրին, առաջ եմ գնում: Զը՛փակ, չը՛փակ լողում եմ, վոր-

տեղ հարկավոր եւ Պոչս թիակի տեղ ե ծառայում:

Ճանձը թոավ անտառը և տեսավ, վոր ծառի ճյուղին նստած ե փայտփորիկը:

— Այ փայտփորիկ, պոչդ տուլ ինձ, —  
Ճանձ տվեց ճանձը: — Թո պոչը գեղեցկության  
համար ե:

— Այ քեզ գիծ, — ասաց փայտփորիկը: —  
Իսկ ծառն ինչպես փորեմ, ինձ համար կերա-  
կուր գտնեմ, ճագերիս համար բուն շինեմ:

— Կտցնվ, — պատասխանեց ճանձը:


— Այս, կտցով եմ փորում, բայց առանց  
պոչի յուա գնալ չեմ կարող: Մի տես, թե ինչ-  
պես եմ փորում:

Փայտփորիկն իր ամուր, կոշտ պոչով հեն-  
վեց ծառի կեղեին, մարմինը թափահարեց և  
կտցով այնպես խփեց ճյուղին. վոր տաշեղները  
դես ու դեն թուան:

Ճանձը տեսավ, վոր իսկապես փայտփորի-  
կը փորելիս պոչի վրա յե հենվում և առանց  
պոչի փորել չի կարող: Պոչը նրան իբրև հե-  
նարան և ծառայում:

Ճանձը թուավ, զնաց:

Թփերի մեջ տեսավ այծյամին իր ճագերի



Նետ: Այծյամն եւ փոքրիկ սպիտակ, փափլիկ  
պոչ ունեց:

Ճանձն ասաց.

— Այծյամ, պոչդ տուր ինձ,

Այծյամը վախեցավ:

— Ի՞նչ ես ասում, — ասաց նա: — Յեթե  
պոչս տամ քոզ, ձագերս կկորչեն:

— Քո պոչը ձագերի ինչին ե պետք, —  
զարմացավ ճանձը:


— Ինչպես չե, — ասաց այծյամը: — Յերբ  
գայլն ընկնում ե մեր յետեկից, յես վազում եմ  
անտառը, վոր թաքնվեմ: Ձագերս ել իմ յետե-  
կից են վազում: Յերբ ծառերի յետեն եմ լի-  
նում, նրանք ինձ չեն տեսնում: Այդ ժամա-  
նակ յես իմ սպիտակ պոչը թափահարում եմ,  
ինչպես թաշկինակ, թե՝ «այստեղ, այստեղ  
վագեցեք»: Յերբ սպիտակ պոչս տեսնում են,  
վազում են իմ յետեկից: Այդ ձեռվ բոլորս ել  
փախչում ենք գայլից:

Ի՞նչ աներ ճանձը. թուավ գնաց: Պատա-  
հեց աղվեսին:

Ի՞նչ լավ պոչ ունի աղվեսը: Փարթան, դե-  
ղին, գեղեցիկ:

«Այս պոչն արդեն իմը կլինի», — մտածեց  
ճանձը:

Թուավ աղվեսի մոտ և գոռաց.



— Պոչդ տուր:

— Ի՞նչ ես ասում, այ ճանձ, — պատասխա-


Նեց աղվեսը:—Առանց պոչի յես կկործեմ: Յեթե  
առանց պոչի լինեմ, շներն ինձ խկույն կը ըռ-  
նեն: Իսկ պոչով յես նրանց խաբում եմ:  
—Ի՞նչպէս, — զարմացավ ճանճը: — Պոչով  
ինչպէս կխաբես:

— Յերբ շները յետեկցս ընկնեն և ինձ  
հասնելիս լինեն, պոչս կծոեմ դեպի աջ, իսկ  
յես դեպի ձախ՝ կփախչեմ: Շները կտեսնեն,  
վոր պոչս դեպի աջ և ծոված, իրենք ել դեպի  
աջ կփաղեն: Յեվ մինչև կհասկանան, վոր սխալ-  
վել են, յես արդեն հեռվում կլինեմ:

Ճանճը հասկացավ, վոր բոլոր գաւզանների  
պոչերն ել պետքական են, ավելորդ պոչեր  
չունեն վոչ անտառի, վոչ գետի կենդանիները:  
Ի՞նչ աներ. թուավ գնաց տուն: Տուն հասավ և  
մտածեց. «Մարդուց ձեռք չեմ քաշի: Այնքան  
կճանձրացնեմ, մինչև վոր ինձ պոչ տառ»:

Մարդը նստած եր պատուհանի մոտ և  
գուրս եր նայում:

Ճանճը թուավ, նստեց նրա քթին: Մարդը՝



ՀԵՇԿԱ, իր քթին: Ճանճը թուավ, նստեց նրա

ճակատին։ Մարդը՝ չը փալ, իր ճակատին։ Ճան-  
ճը թուավ, նստեց ելի քթին։

— Հեռացիր ինձանից, այս ճանճ, — խնդրեց  
մարդը։

— Չեմ հեռանա, — բզզաց ճանճը։ — Ինչու  
ինձ ծաղրեցիր, ազատ պոչեր վորոնելու ուղար-  
կեցիր։ Յես բոլոր զազաններին ել հարց ու  
փորձ արի. պոչերը գործի համար են։

Մարդը տեսավ, վոր ճանճն իրենից ձեռք  
չի քաշելու, քիչ մտածեց ու ասաց։


— Ճանճ, այս ճանճ։ Տես, կովը նստած  
ե բակում։ Գնա, հարցրու, թե պոչը նրա ին-  
չին ե պետք։

— Լավ, — պատուիսանեց ճանճը, — կովին  
ել կհարցնեմ։ Իսկ յեթե կովն ել իր ողոչն  
ինձ չտա, քո հետքն աշխարհից կջնջեմ։


Ճանճը պատուհանից դուրս թռավ, նստեց  
կովի մեջքին և սկսեց բզզալ, հարցնել.

— Կով, այս կով, պոչն ինչիդ ե պետք,  
կով, այս կով, պոչն ինչիդ ե պետք։

Կովը լոեց, լոեց, հետո, վոր պոչը մեջքին  
շխմից, ճանճը տրորվեց։



Ճանճն ընկավ գետին, հոգին տվեց, վոռ  
ները ցցեց։



Իսկ մարդը պատուհանից ասաց.  
— Տեղն ե. մտրդկանց մի ձանձրացրու,  
դազաներին մի ձանձրացրու Զահլա տարար,

Նկարները՝ Յու. Վանեցովայի  
Թարգմանեց՝ Հ. Հայրապետյան  
Լեզվ. Խմբագիր՝ Հ. Հարությունյան  
Տեխ. խմբագիր՝ Ան. Գառպարյան  
Էլեկտրաֆան Նկարիչ՝ Ան. Միհրանյան  
Սրբագրիչ՝ Մ. Ցեղանկյան

Գլուխի լիազոր՝ Բ-1159, Հրատ. 5:64.  
Պատվեր 435, Տիրաժ 5000  
Հանձնված և արտադրության 2/VI-1940 թ.  
Ստորագրված և ապագր. համար 11/VI-1940 թ.  
Հայաբնականի տպարան, Յերևան, Աբովյանի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0390439

ԳԻՒԸ 1 Ա. 20 Կ

2771  
36791

В. БИАНКИ  
ХВОСТЫ  
Гиз Ари. ССР Ереван, 1940